Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Արարատ գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում (Ձև1), մեկ լուսանկար՝ 3-4 չափի

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

3. Անձը հաստատող փաստաթուղթ

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում:

5. Ինքնակենսագրություն(Ձև5)

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը և հավաստող փաստաթուղթ 7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին ժամը 14:00-ին, Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արարատ Խնկո-Ապոր 43:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)-40-33-54: